

## Տ. ԳՆԵԼ ԱԲԵՂԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ

(22 դեկտեմբերի 2002 թ.)

«Որ բարձրացուցանէ  
զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնար-  
հեցուցանէ զանձն՝ բարձրացցի»:

«Ոչ որ բարձրացնում է իր անձը,  
պիտի խոնարիվի, և ոչ խոնարհեցնում է  
իր անձը՝ պիտի բարձրանա»:

(Մատթ. Իգ 12)

Ավելարանը մեզ ավանդում է մի շարք օրինակներ, որոնք մեր առջև հավերժացնում են խոնարհության հաղթանակը:

Անոռանալի է Շովիաննես Մկրտչի օրինակը, որն ինքն իրեն անարժան էր համարում Քրիստոսի կոշիկները կապելու, և փառավոր վարձագրությամբ Հիսուսի կողմից ասվեց, թե մարդկանց որդիների մեջ երբեք չի ծնվել ավելի մեծը, քան Շովիաննես Մկրտիչը: Նոյն խոնարհությունն ուներ նաև Կափառնայումի հարյուրապետը, որը դիմեց Փրկչին՝ ասելով. «Տե՛ր, ես արժանի չեմ, որ դու իմ հարկի փակ մրնես» (Մատթ. Լ 8): Եվ Հիսուս հեռվից նրա ծառային բժիշկեց:

Իսկ այսօր, Սուրբ Պատրարագի ընթացքին, Ղուկասի Ավելարանից ընթերցված փարիսեցու և մաքսավորի առակում Հիսուս մեզ ուսուցանում է մարդկային գոռողության և խոնարհության մասին, թե Տերը պիտի խոնարհեցնի նրան, ով որ հպարտացած էր, և կրաքացնի մյուսին, ով որ ինքն իրեն խոնարհեցնում էր և նվասպացնում Ասպծո առջև:

Տաճարում աղոթքի ժամանակ, որդենի հավաքված էին փարբեր խավերի մարդիկ, առանձնանում էին երկու հոգի, որոնք նույնանես կանգնած էին աղոթքի, բայց նրանց աղոթքները ակնհայտորեն փարբեր էին: Նրանցից մեկը փարիսեցի էր, որը հրեական հասարակության այն շերտին էր պատկանում, որին հարգում էին, որովհետև մեծ զգուշությամբ և ծայրահեղ նախանձախնդրությամբ էին պահում օրենքը:

Նա համարվում էր օրինավոր և պարփակությամբ մի անձ, որն Ասպծուն մոտ կանգնած ինքն իր մասին մեծ կարծիք ուներ և, պայմանավորված այդ համարմամբ, հպարտությամբ աղոթում էր՝ ակնկալելով, թե Ասպծո պարփակությունը էր իրեն շնորհներ դառնալու, որովհետև ինքը բոլորից արժանավոր էր. «Փա՛ռք Ձեզ, Ասպծած, - ասում էր, - փառք Ձո Սուրբ Անվանը. ամբողջ աշխարհը լեցուն է անիրավ, հափշրակող և շնացող մարդկանցով, փա՛ռք Ձեզ, որ ես նրանց նման չեմ»:

Այսպես գոռողությունից և ինքնավսրահությունից դրդված նա հայացքն ուղղում է ոչ այնքան հեռու կանգնած մաքսավորին՝ ասելով. «Ահա այս մաքսավորն էլ նրանցից մեկն է,

որքան հափշբակություններ է արել, ևս դրանցից ոչ մեկը չեմ գործել: Այլ հակառակն՝ օրենքի պահանջած բարեպաշտությունները հոժարությամբ եմ կարարել, և եթե մյուսները դարձաւ մեջ միայն մեծ քավության ծոմն են պահում, ևս շարաթը երկու օր ծոմ պահելու սովորությունը չեմ խախտել, ըստ օրենքի բասանորդները ճշգրտելու մեջ վճարել, նոյնիսկ անանուխի և փեգենայի հարկ եմ դիմել: Փա՛ռք Քեզ, Ասրված, որ ինձ սրբության մեջ ես պահել և շնորհներիդ արժանի արել»:

Այսպիսով փարիսեցին ինքնագովկությամբ վերջացնում է իր աղոթքը: Օրինապահ, արդար, ըստ իրեն՝ ոչ մեղավոր փարիսեցին որսից այլ բան չուներ Ասրծուց խնդրելու, որովհետիւն կարծում էր, թե ինքը կարարյալ է: «Տպանաբար վերջին անգամ արհամարհական հայացքով նայում է մաքսավորին և դուրս գալիս գաճարից»:

Ի հակադրություն փարիսեցու, անհամեմագելիորեն բարբեր էր մաքսավորի աղոթքը: Այս առակում մենք գտնենում ենք մի խոնարի անձնավորություն, որ Ասրծոն Սուրբ Տաճարի մեջ չէր համարձակվում գլուխ բարձրացնել, որպեսզի չհանդիպի Ողորմած Ասրծոն հայացքին, այլ գերին ընկած, աչքերը խոնարիած, ծեռքերով ուժգին խփում էր կրծքին՝ հիշելով, թե քանի անգամ անիրավ գործեր է արել. զգում էր, որ մեղանչել է Ասրծոն առջև, Նրա շնորհներին անարժան է գրնչել, բայց անկեղծ սրբով զղում գրջում էր՝ մրածելով, որ Բազումնորս և Երկայնամիտ Տերը չի ցանկանում մեղավորի դադարաբությունը, այլ սպասում զղջան: «Ասրուած, քաւեա զիս զմեղաւորս»:

Ահա այս էր նրա ամրող աղոթքը, բայց ինչ խոնարի խոսքովանություն և ինչ գեղեցիկ աղերսանք: Ճիշտ է, կարծ էր նրա աղոթքը, բայց այնքան կրկնված և հավաքրով լեցուի:

Անշուշփ հեռվից դիմուղի համար պիտի այն կարծիքը ձևավորվեր, որ Ասրված այլի գոհ լիներ օրինապահ փարիսեցու և երես դարձներ գողացող, անիրավ մաքսավորից: Սակայն Դիտուի դապողությունը բոլորվին հակառակն է:

«Ասրծոն առաջ, - ասում է, - մաքսավորն արդարացավ և Ասրծուց թողություն սրանալով, դուրս եկավ գաճարից ներված ու սրբված, իսկ արդար, բարեպաշտ երևացողը նոր մեղքի գեր եղավ և բաճարից դուրս եկավ ավելի մեղավոր»:

Միրեկիներ, փարբերությունն աղոթքում արփահայփված հոգու դրսնորման մեջ է: Ինքն իրենով գոհ եղողը զղում չունի, մարդկանց խարելով, կարծում է, թե Ասրծուն է հնարավոր է խարել: Միայն ուրիշներին երևալու համար օրինապահությունը առաջինություն չէ, բռն առաջինության ոգին գոյություն չունի նրա մեջ, միայն կեղևն է փայլուն, իսկ միջուկը՝ փփած է:

Միրեկի քույրեր և եղբայրներ, եթե մենք այսօր զգում ենք մեր հոգում և մրգում, որ մենք էլ ենք այս փարիսեցու պես, ապա պիտի ազարպենք նրանից, կանգնենք խոնարիության ճիշտ ճանապարհին, որը դանում է դեպի կարարյալ զղում, դեպի մաքրագործում և, ի վերջ, դեպի Քրիստոս, որովհետիւն մեր Տերը չի խարվում արփաքին երևույթներից, այլ մեր սրբերն է քննում: Եվ մեղավորի աղոթքը կընդունի Ասրծոն կողմից կարարյալ զղումով, որ պարունակում է անկեղծ ցավ, հագուցման պարրասփակամություն և չմեղանչելու ձգողում:

Սիրելի ժողովուրդ, եկեք փորձենք յուրացնել մաքսավորի խոնարի պատկերը և մեր սրբից բխած աղերսանքը նրա հետ միասին կրկնելով՝ ասենք. «Ասպուած քաւեա զիս զմեաւորս, Ասպուած քաւեա զիս զմեաւորս, և կեցո»:

Անկասկած, անուշարույր խնկի նման պիտի վեր բարձրանա մեր աղոթքը, և մենք ևս մաքսավորի պես, եթե ոչ բոլորովին սրբած, բայց սրբության և արդարության կյանքն ապրելու մեծագույն բաղդանքով, մեծագույն որոշմամբ զորացած՝ այսօր և մեր բոլոր ապրած օրերին դուրս կգանք ասպածակերպ այս կամարներից ու խաղաղ հոգով կվերադառնանք մեր տները:

Ահա այսպես Շխոս եզրակացնում է, թե «ով ամբարդավանությամբ բարձրացնում է իրեն, ընկնում է Ասպծո երեսից, ցածրանում ու սպորանում է, իսկ ով որ ճշմարիդ խոնարհությամբ է ինքն իրեն սպորադասում, ևա Վսպահարար կիանդիպի Ասպծո գթությանը և իրապես կբարձրանա»:

**Ընորհք, սէր և ասպուածային սրբարար զօրութիւնն եղիցի ընդ ձեզ և ընդ ամենինեանս ամէն:**